ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մարտի 2016 թվական N 51-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի «Որպես նվիրատվություն գույք ընդունելու և ամրացնելու մասին» N 1334-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խորարծառի պուրակում գտնվող «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող Ղորղանյան փողոց N 91 հասցեով շենքը, որպես նվիրատվություն, տրվել է Հայաստանի Հանրապետությանը և այն ամրացվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2016թվականի փետրվարի 25-ին N 2497 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N 91 հասցեի շենք-շինությունների պահպանման և սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,4 (զրո ամբողջ չորս տասնորդական) հեկտար մակերեսով հողամասն անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:
2. Սույն որոշումից բխող գործառույթների ձևակերպումներն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

	Կողմ (15)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ա. Ադամյան			
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Մ. Գաբոյան			
Ա.Գրիգորյան			
Վ. Եդիգարյան			

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱՐԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«24» մարտի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մարտի 2016 թվական N 52-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊՈՂՈՍԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 3-ի «Գույք նվիրաբերելու, ամրացնելու և շահագործման համար ոչ պիտանի անշարժ գույքը քանդելու մասին» N 405-Ա որոշման 8-րդ կետի պահանջները և «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության Գյումրու լոկոմոտիվային դեպոյի պետի 2016 թվականի հունվարի 21-ի N 1 տեղեկանքն ու քաղաքացի Անդրանիկ Պողոսի Մանուկյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված՝ 2016թվականի հունվարի 11-ին N 70 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24102014-08-0023) Գյումրի քաղաքի Երկաթ/գծի N 40/4 հասցեի լոկոմոտիվային դեպոյի ջերմաքարշային արտադրամասի ավտոարգելակման բաժնի 85,32 (ութսունհինգ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շենքը և դրա պահպանման ու սպասարկման համար հատկացված 0,011481 (զրո ամբողջ տասնմեկ հազար չորս հարյուր ութսունմեկ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0534-0009) բնակվելու նպատակով, անհատույց սեփականության իրավունքով հանձնել այնտեղ բնակվող քաղաքացի Անդրանիկ Պողոսի Մանուկյանի ընտանիքին:
2. Սահմանել, որ սեփականության իրավունքի անհատույց փոխանցման մասին պայմանագրի նոտարական վավերացման և գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման քաղաքացի Անդրանիկ Պողոսի Մանուկյանի միջոցների հաշվին:

	Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան			
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Մ. Գաբոյան			
Ա.Գրիգորյան			

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս.ԹԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«24» մարտի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մարտի 2016 թվական N 53-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 19/9 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության համաձայնությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի փետրվարի 10-ի N 010/06.1/601-16 գրությունը (համայնքապետարանում մուտքագրված՝ 2016 թվականի փետրվարի 10-ին N1804 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Փոփոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ պետական իրավունքների գրանցման վկայական N 06072015-08-0021) Վազգեն Սարգսյան փողոց N 19/9 հասցեի 0,03 (զրո ամբողջ երեք հարյուրերորդական) հեկտար մակերեսով հողամասի (կադաստրային ծածկագիր 08-001-0336-0005) գործառնական նշանակությունը՝ այն բնակավայրերի հողերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությունից տեղափոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկ:

	Կողմ (15)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ա. Ադամյան			
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Մ. Գաբոյան			
Ա.Գրիգորյան			
Վ. Եդիգարյան			
Հ. Խաչատրյան			
Տ.Հովհաննիսյան			
Վ. Հունանյան			

Ա.Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«24» մարտի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մարտի 2016 թվական N 54-Ա

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՈՒԼՈՒԶ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՍԱՄԲՈ ՄԱՐԶԱԾԵՎԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿ ՍՏԵՓԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2016 թվականի ապրիլի 7-11-ը Ֆրանսիայի Հանրապետության Թուլուզ քաղաքում կայանալու է սամբո մարզաձևի Եվրոպայի երիտասարդների առաջնությունը, որին մասնակցության իրավունք է ստացել գյումրեցի մարզիկ Ստեփան Սարգսյանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ելնելով սամբո մարզաձևի Եվրոպայի երիտասարդների առաջնությանը Ստեփան Սարգսյանի մասնակցությունն ապահովելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2016 թվականի մարտի 14-ին N3253 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ֆրանսիայի Հանրապետության Թուլուզ քաղաքում կայանալիք սամբո մարզաձևի Եվրոպայի երիտասարդների առաջնությանը գյումրեցի մարզիկ Ստեփան Սարգսյանի մասնակցությունն ապահովելու համար գործուղման ծախսերը հոգալու նպատակով հատկացնել 548.000 (հինգ հարյուր քառասունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4222) «Արտասահմանյան գործուղումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետին ներկայացնել հաշվետվություն՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի ծախսերի վերաբերյալ:

	Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան			
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Մ. Գաբոյան			

ապահովման, ինչպես նաև պահեստավորված ապրանքների պահպանման համար անհրաժեշտ ծախսերի գումարից առաջացած վարձավճարի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ **ՎՎ = [(Գ + Ջ + Էլ.) - Ն] /N**, որտեղ՝ **ՎՎ**-ծնողական վերահաշվարկված վարձավճարի գումարն է, **Գ**-ծախսված գազի գումարն է, **Ջ**-ծախսված ջրի գումարն է, **Էլ**.-ծախսված էլեկտրաէներգիայի գումարն է, **Ն**-շահույթ չհետապնդող կազմակերպություններին նպատակային տրվող գումարն է, **N**-մանկապարտեզ հաճախող երեխաների ցուցակային թիվն է:»,

բ. «3. Հանձնարարել հաստատությունների տնօրեններին՝ հաստատությունում ծնողական վարձավճարի չափը, վարձավճարի սննդի գումարի չափը, կոմունալ ծախսերի մասով գումարի չափը, ինչպես նաև սույն որոշումը փակցնել հաստատություններում՝ ծնողների համար տեսանելի վայրերում»:

	Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան			
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Մ. Գաբոյան			
Ա.Գրիգորյան			
Վ. Եդիգարյան			
Հ. Խաչատրյան			
Տ.Հովհաննիսյան			
Վ. Հունանյան			
Ն. Մեսրոպյան			
Ռ.Մխիթարյան			
Է. Մկրտչյան			
Վ.Շիրինյան			
Մ. Սահակյան			
Տ. Փանոսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«24» մարտի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մարտի 2016 թվական N 55-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 04-Ի N3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի, 5-րդ մասի 1-ին պարբերության, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի մարտի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություն (այսուհետ՝ հաստատություն) հաճախող երեխայի ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) միջև կնքվող օրինակելի պայմանագրի վերաբերյալ մեթոդական ցուցումներ հաստատելու մասին» N180-Ա/Ք հրամանով հաստատված N1 հավելվածի 1.9-րդ, 1.10-րդ և 2.2-րդ ենթակետերի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 04-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների ծնողական վարձավճարների 2016 թվականի ամսական դրույքաչափերը սահմանելու մասին» N3-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) «սահմանել» բառից առաջ լրացնել «1.» թիվը,
2) որոշումը լրացնել նոր 2-րդ, 3-րդ կետերով՝

ա. «2. Սահմանել, որ՝

1) հաստատություններ երեխաների հաճախումների բացակայությունների դեպքում բացակայած օրերի համար ծնողական վարձավճարներից սննդի վճար չի գանձվում, եթե ծնողը (կամ նրա օրինական ներկայացուցիչը) հաստատության տնօրինությանը գրավոր տեղեկացրել է երեխայի բացակայության մասին և (կամ) ներկայացրել է բժշկի կողմից տրված տեղեկանք երեխայի և (կամ) իր հիվանդության վերաբերյալ», բացառությամբ հաստատության կողմից հաստատված կոմունալ ծառայությունների մասով վճարից,

2) հաստատություններ հաճախող երեխաների ծնողական վարձավճարների ամսական մեծությունը վերահաշվարկի արդյունքում որոշվում է հետևյալ բանաձևով՝ **ՎՎ = ԱՎ - ՍՎ X (ԲՕ/ԱՕ),** որտեղ՝ **ՎՎ**-ծնողական վարձավճարի վերահաշվարկված գումարն է, **ԱՎ**- ամսական վարձավճարն է, **ՍՎ**- սննդի վարձավճարն է, **ԲՕ**- բացակայած օրերն են, **ԱՕ**- աշխատանքային օրերն են,

3) հաստատություններում արձակուրդների կամ արգելափուլի (կարանտինի) շրջանում ջեռուցման և ջրամատակարարման համակարգերի անխափան գործունեության

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս.ԹԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«24» մարտի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մարտի 2016 թվական N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 205-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1345-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 205-Ա որոշումը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» N 205-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) 1-ին կետի 1-ին ենթակետում «7,714046 (յոթ ամբողջ յոթ հարյուր տասնչորս հազար քառասունվեց միլիոներորդական)» թիվը և բառերը փոխարինել «8,536198 (ութ ամբողջ հինգ հարյուր երեսունվեց հազար հարյուր ինսունութ միլիոներորդական)» թվով և բառերով,
   2) N 1 հավելվածի 5-րդ կետի 3-րդ սյունակում «19052015-08-0030» թիվը և 4-րդ սյունակում «1.109748» թիվը փոխարինել համապատասխանաբար «30122015-08-0127» և «1.9319» թվերով,
   3) N 1 հավելվածի ԸՆԴԱՄԵՆԸ տողում «7.714046» թիվը փոխարինել «8.536198» թվով,
   4) N 2 հավելվածի 10-րդ կետի 2-րդ սյունակում «Մուշ-2-2 թաղամաս» բառերը փոխարինել «Մուշ-2 թաղամաս» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (15) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«24» մարտի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մարտի 2016 թվական N 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 16 (ՏԱՍՆՎԵՑ) ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ, ՄՈՒՏՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄՈՒՏՔԵՐՈՒՄ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՅՍԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի թվով 16 (տասնվեց) համատիրություններ գրություններով դիմել են Գյումրի համայնքի ղեկավարին և հայտնել, որ իրենց կողմից ուսումնասիրվել են Գյումրի քաղաքի թվով 96 (իննսունվեց) բազմաբնակարան շենքերը, որոնք կառուցված են եղել մինչև երկրաշարժը, ինչպես նաև երկրաշարժից հետո, տանիքները և մուտքերը գտնվում են խիստ անմխիթար վիճակում և ունեն վերանորոգման կարիք, ինչպես նաև խիստ անհրաժեշտ է բազմաբնակարան շենքերի մուտքերում արհեստական լույսերի տեղադրումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համատիրությունների նախագահներ՝ Ամալյա Բաբալիկյանի, Հակոբ Հունանյանի, Վլադիմիր Հովհաննիսյանի, Ազատ Ավագյանի, Անդրանիկ Թորոսյանի, Ժորա Վարդանյանի, Գայանե Սահակյանի, Գագիկ Գալստյանի, Սենիկ Եսայանի, Սեդա Ծառուկյանի, Արմեն Խաչատրյանի, Հրայր Խաչատրյանի, Սեյրան Պոլոյանի, Թամարա Ասատրյանի, Ռուզաննա Խաչատրյանի, Մովսես Ջուհարյանի գրությունները մուտքագրված՝ համապատասխանաբար 2016 թվականի մարտի 21-ին NN 3466, 3467, 3468, 3469, 3470, 3471, 3472, 3473, 3474, 3476, 3477, 3478, 3479, 3480, 3481, մարտի 22-ին N 3496 թվագրումներով)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի թվով 16 (տասնվեց) համատիրություններին տրամադրել սուբսիդիա 25.000.000 (քսանհինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ սպասարկման տարածքներում գտնվող բազմաբնակարան շենքերի տանիքների, մուտքերի վերանորոգման ինչպես նաև մուտքերում արհեստական լույսերի տեղադրման նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (4521) «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ (15) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

7) Երկրապահ կամավորականների միության անդամ թվով 17(տասնյոթ) սոցիալապես անապահով ազատամարտիկներից յուրաքանչյուրին 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 255 000 (երկու հարյուր հիսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 7 հավելվածի:

2. Երկրապահ կամավորականների միության Գյումրու տարածքային բաժանմունքին, որպես օգնություն, հատկացնել 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2016թվականի մայիսին Եռաբլուրում և Սարդարապատում անցկացվելիք միջոցառումներին մասնակցելու համար:

3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝օրենքով սահմանված կարգով:

	Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան			
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Մ. Գաբոյան			
Ա.Գրիգորյան			
Վ. Եդիգարյան			
Հ. Խաչատրյան			
Տ.Հովհաննիսյան			
Վ. Հունանյան			
Ն. Մեսրոպյան			
Ռ.Մխիթարյան			
Է. Մկրտչյան			
Վ.Շիրինյան			
Մ. Սահակյան			
Տ. Փանոսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«24» մարտի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մարտի 2016 թվական N 58-Ա

ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու զինկոմիսարիատի ներկայացրած ցուցակները և Երկրապահ կամավորականների միության Գյումրու տարածքային բաժանմունքի նախագահ՝ Վարդան Սարգսյանի ներկայացրած գրությունները (համայնքապետարանում մուտքագրված՝ համապատասխանաբար 2016 թվականի մարտի 22-ին NN 3507, 3508 մարտի 18-ին N3387 թվագրումներով)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես անապահով պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1) արցախյան պատերազմում (1991-1994թվականներին) զոհված թվով 104 (մեկ հարյուր չորս) ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 080 000 (երկու միլիոն ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի,

2) զոհված (մահացած) թվով 160 (մեկ հարյուր վաթսուն) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 2 հավելվածի,

3) արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ թվով 16 (տասնվեց) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 240 000 (երկու հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N3 հավելվածի,

4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ թվով 238 (երկու հարյուր երեսունութ) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 380 000 (երկու միլիոն երեք հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 4 հավելվածի,

5) Գյումրի քաղաքի՝ Հայրենական Մեծ պատերազմի մասնակից թվով 49 (քառասունինը) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 735 000 (յոթ հարյուր երեսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N5 հավելվածի,

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից՝ թվով 35 (երեսունհինգ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 525 000 (հինգ հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N6 հավելվածի,

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՔԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«24» մարտի 2016 թ.